ԴՈՆԱՐԱ ՀՈՎԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջին կարգի տնտեսագետ

ՀՀ-Ի ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ

Վերջին մի քանի տասնամյակում պետությունների համագործակցության մեջ որպես հարաբերությունների կառուցման ձևաչափ լայն տարածում են ստացել ինտեգրացիոն գործընթացները, որոնք իրականացվում են պետությունների որոշակի խմբի կողմից ինտեգրացիոն կազմավորում հիմնադրելու միջոցով: Նման կազմավորումներ են Եվրոպական միությունը (ԵՄ), Շանհայի համագործակցության կազմակերպությունը, Եվրասիական տնտեսական ընկերակցությունը և այլն: Նշված ինտեգրացիոն կազմավորումների շարքը գալիս է համալրելու Եվրասիական տնտեսական միությունը (այսուհետ՝ նաև ԵՏՄ), որին անդամակցում են Հայաստանը, Ռուսաստանը, Ղազախստանը և Բելառուսը[1]: Եվրասիական տնտեսական միությունը հիմնադրվել է Եվրասիական տնտեսական ընկերակցության մաքսային միության հիման վրա՝ 2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի ստորագրմամբ և ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից: Միության 5 անդամ-երկրներից միայն Հայաստանը չունի ընդհանուր սահման ԵՏՄ մյուս երկրներից որևէ մեկի հետ, ինչն էլ էական դժվարություններ է առաջացնում ապրանքաշրջանառության տրանսպորտային ապահովումը կազմակերպելու հարցում: Միավորման նպատակն է անդամ-պետությունների տնտեսությունների ամրապնդումը, դրանց միջև կապերի սերտացումը, տնտեսության մոդեռնիզացումը և համաշխարհային շուկայում տվյալ պետությունների մրցունակության բարձրացումը: ԵՏՄ-ում իրականացվում է մակրոտնտեսական համաձայնեցված քաղաքականություն, որի վարման հիմնական ուղղություններն են՝ միության անդամ-երկրների տնտեսությունների գործունեության նույնական սկզբունքների ձևավորումը, տնտեսությունների արդյունավետ փոխգործակցության ապահովումը, ինչպես նաև տեսության համար միասնական սկզբունքների և ուղղությունների մշակումը: Պայմանագրով սահմանվում է ապրանքների, ծառայությունների և աշխատուժի ազատ տեղաշարժ, կոորդինացված

[1] http://publications.ysu.am/wp-content/uploads/2015/05/63-74.pdf

համաձայնեցված կամ միասնական տնտեսական քաղաքականության իրականացում հետևյալ ոլորտներում[1]՝

1. մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորում,
2. մաքսային կարգավորում,
3. տեխնիկական կարգավորում,
4. սանիտարական, անասնաբուժական-սանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ,
5. ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրում ու բաշխում,
6. երրորդ երկրների նկատմամբ առևտրային ռեժիմի սահմանում,
7. արտաքին և փոխադարձ առևտրի վիճակագրություն,
8. մակրոտնտեսական քաղաքականություն,
9. մրցակցային քաղաքականություն,
10. էներգետիկ քաղաքականություն,
11. արդյունաբերական և գյուղատնտեսական լրավճարներ,
12. բնական մենաշնորհներ,
13. պետական և /կամ/ համայնքային գնումներ,
14. ծառայությունների և ներդրումների փոխադարձ առևտուր,
15. տրանսպորտ և փոխադրում,
16. արժութային քաղաքականություն,
17. մտավոր սեփականություն,
18. աշխատանքային միգրացիա,
19. ֆինանսական շուկաներ:

Միության առանձնահատկություններից է այն, որ անդամ-երկրները միասնական դրույքաչափով պարտավորվում են մաքսազերծել երրորդ, այսինքն՝ միության անդամ չհանդիսացող երկրներից ներմուծվող ապրանքները: Այս կերպ ԵՏՄ-ն հավակնում է կարգավորել իր անդամ պետությունների և երրորդ երկրների միջև առևտրային հարաբերությունները[2]: Անդամակցելով ԵՏՄ-ին՝ ՀՀ-ն պարտավորվում է հավաքագրած մաքսատուրքերը փոխանցել ԵՏՄ համընդհանուր բյուջե, որտեղից հետո պետք է ձեռք բերի իր համար նախատեսված մասնաբաժինը, ինչը կազմում է 1.13 %: Միաժամանակ մեր հանրապետությունը պարտավորվում է իր տնտեսական քաղաքականությունն իրականացնել մակրոտնտեսական ցուցանիշների որոշակի քանակական արժեքների սահմաններում,

---

[1] http://www.mineconomy.am/uploades/20142811172603816.pdf

[2] http://www.academia.edu/12700143/%D5%80%D5%80_-_%D4%B5%D4%B1%D5%8F%D5%84_%D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8

մասնավորապես համախմբված բյուջեի տարեկան դեֆիցիտը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3 %-ը, պետական պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 50 %-ը, իսկ գնաճի մակարդակը չպետք է գերազանցի ամենացածր գնաճ ունեցող անդամ-պետության ցուցանիշը ավելի քան 5 %-ով[1]: Այդ իսկ պատճառով միասնական տնտեսական քաղաքականություն իրականացնելիս պետք է անպայման հաշվի առնվեն հարկաբյուջետային քաղաքականության մեջ տեղի ունեցող փոփոխությունների բոլոր հետևանքները: ԵՏՄ-ի կարգավորումներն առաջին հերթին վերաբերում են անդամ-երկրների փոխադարձ և երրորդ երկրների հետ առևտրին: ԵՏՄ-ի ընդհանուր առևտրաշրջանառությունը երրորդ՝ Միության անդամ չհանդիսացող երկրների հետ 2016թ. կազմել է 509.8 մլրդ դոլար, որից արտահանման ցուցանիշը՝ 308.4 մլրդ, իսկ ներմուծմանը՝ 201.4 մլրդ: Սա 2015թ. ցուցանիշից 12%-ով քիչ է:



Գծապատկեր 1. **ԵՏՄ-ի առևտուրը երրորդ երկրների հետ 2016թ. (մլրդ դոլար)**[2]

Ապրանքաշրջանառության ցուցանիշների դիտարկումն առանձին երկրների մասով ցույց է տալիս, որ թե՛ արտահանման, թե՛ ներմուծման առավելագույն բաժինը՝ մոտ 85%-ը, հասնում է Միության գերխոշոր

[1] Հիմնադիր պայմանագրի 63-րդ հոդված. Տնտեսական զարգացման կայունությունը որոշող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները:

[2] Աղբյուրը՝ ԵՏՄ վիճակագրության բաժին:

անդամ Ռուսաստանի Դաշնությանը: Պատկերը նույնն է ԵՏՄ ներքին ապրանքաշրջանառության դեպքում: ԵՏՄ 5 անդամ-երկրների ներքին ապրանքաշրջանառության 84%-ը բաժին է ընկնում Ռուսաստանի հետ 4 երկրների փոխադարձ առևտրին: ԵՏՄ-ն աշխարհին առաքում է հանքահումքային և վառելիքաէներգետիկ ապրանքներ (արտահանման 60.6%) և ներմուծում պատրաստի տեխնոլոգիական արտադրանք (43.3%), ինչը փաստում է ԵՏՄ-ի արդյունաբերական պոտենցիալի ցածր և անմրցունակ մակարդակի մասին: Հայաստանը Միության արտաքին առևտրաշրջանառության մեջ ունի աննշան ծավալներ՝ ընդամենը 0.7%: Արտահանման ծավալներում Հայաստանի մասնաբաժինը 0.4% է, ներմուծման մեջ՝ 1.1%[1]:



Գծապատկեր 2. **Հայաստանի առևտրաշրջանառությունը (մլն դր.) 2017թ.** [2]

Սա փաստում է, որ Հայաստանն ի սկզբանե կայուն ապրանքաշրջանառություն է ունեցել այլ, մասնավորապես եվրոպական երկրների, ոչ թե Ղազախստանի, Ղրղզստանի կամ Բելառուսի հետ: Հայ գործարարները ներգրավված չեն եղել ղազախական, ղրղզական և բելառուսական շուկաներում, նրանց հիմնական ուղղությունները եղել են Եվրոպան, Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Կանադան: Այդ է պատճառը, որ ներկայումս բավականին դժվար է նոր շուկաներ մտնելը, և չնայած ապրանքաշրջանառությունն այս երկրների հետ շատ ցածր է, այնուամենայնիվ նկատվում

[1] http://ampop.am/armenia-in-eaeu/#imageclose-2742

[2] Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն:

է որոշակի աճ: Խնդիրը դժվար լուծելի է դառնում նաև այն պատճառով, որ այդ երկրների արտադրանքները մրցունակ և նախընտրելի չեն միմյանց համար: Սա դժվար թե կարգավորեն անգամ Միությունում գործող առևտրային կարգավորման ազատական դրույթները: Եվ սա միայն Հայաստանի հետ առևտրային հարաբերություններին չի վերաբերում, այլ նաև նշված Բելառուս-Ղազախստան, Բելառուս-Ղրղզստան և Ղրղզստան-Ղազախստան փոխադարձ առևտրին:

Աղյուսակ 1

ՀՀ առևտուրը ԵԱՏՄ անդամ-երկրների հետ 2017թ. (հազար ԱՄՆ դոլար) [1]

Երկրներ	Արտահանում	Ներմուծում	Սալդո
Ռուսաստան	541 582,60	866 643,70	-325 061,10
Բելառուս	6 937,0	23 075,40	-16 138,40
Ղազախստան	4 915,70	8 666,70	-3 751,00
ԵԱՏՄ	553 435,30	898 385,80	-344 950,50

ՀՀ-ի գլխավոր առևտրային գործընկերը վերջին մի քանի տարիներին թե՛ արտահանման, թե՛ ներմուծման գծով եղել և մնում է Ռուսաստանի Դաշնությունը, որը միաժամանակ ԵՏՄ անդամ-երկիր է: 2017թ. նրան բաժին է ընկել ՀՀ-ի արտահանման 24.1%-ը, ներմուծման՝ 20.7%-ը: ՀՀ առևտրային գործընկերների շարքում ԵՏՄ անդամ-երկրներից երկրորդ տեղում Բելառուսն է: Ղազախստանից Հայաստան ապրանքների ու ծառայությունների արտահանումը և ներմուծումը համեմատած ՌԴ-ի և Բելառուսի հետ եղել է քիչ: Ղրղզստանից ապրանքների և ծառայությունների ներմուծում գրեթե չի եղել, իսկ արտահանումը կազմում է շատ չնչին մասը:

[1] Աղբյուր՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն՝ http://www.armstat.am/file/article/sv_12_17a_411.pdf.



Գծապատկեր 3. **Հայաստան-Ռուսաստան առևտրաշրջանառությունը 2011-2017թթ. (մլն դոլար)**[1]

Ըստ առևտրային ցուցանիշների՝ Հայաստանի առևտրատնտեսական կապերը ԵՏՄ-ի շրջանակներում սահմանափակվում են բացառապես ՀՀ-ՌԴ տնտեսական կապերի տիրույթում: Այս իրավիճակում ավելորդ է դառնում անդրադարձ կատարել Հայաստան-Բելառուս, Հայաստան-Ղազախստան, Հայաստան-Ղրղզստան ներդրումներին, աշխատանքային միգրացիային, տուրիզմին կամ այլ ոլորտների, քանի որ տեսանելի շարժ այդ առումով չկա: Հետևաբար, ԵՏՄ-ի սկզբնավորման գոնե այս փուլում Հայաստանը Միության կազմում փորձում է առաջնահերթ և բացառապես տնտեսական հարաբերություններ խորացնել Ռուսաստանի հետ: ԵՏՄ անդամակցությունից հետո, Հայաստանը ևս զրոյականացրեց մաքսատուրքերը, ինչը երկարաժամկետ դրական ազդեցություն կարող է ունենալ նախ՝ հայկական շուկայում սպառողական ապրանքների գների նվազման, ապա՝ հայկական ապրանքների՝ ԵՏՄ շուկայում մրցունակության մեծացման առումով: Թե որքանով է մաքսատուրքերի զրոյականացումը նպաստել Ռուսաստանից ներմուծվող և դեպի Ռուսաստան արտահանվող ապրանքների ծավալների վրա, ցույց է տալիս վիճակագրությունը: Օրինակ, եթե 2015թ. Ռուսաստանից տրանսպորտային միջոցների ներմուծման ծավալը կազմում էր 16.5 մլն դոլար[2], ապա 2016թ. այդ ծավալը աճել է 53%-ով[3]՝ հասնելով 25.3 մլն դոլարի: Հայաստանից

[1] Աղբյուր՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն:
[2] http://armstat.am/file/article/ft_2_nish_2016_10.pdf.
[3] http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/tradestat/tables/intra/Documents/2016/12/I201612_9_1.pdf.

Ռուսաստան ամենաշատն արտահանվում են ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ[1]: 2015թ. արտահանումը կազմել է 92.3 մլն դոլար, մինչդեռ 2016թ. այն աճել է 52.5%-ով՝ կազմելով 140.8 մլն: Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ ապրանքախմբի մեջ 94%-ը բաժին է ընկնում սպիրտային խմիչքներին, հիմնականում կոնյակի և օղու տեսականուն: Դեռևս խորհրդային ժամանակներից ռուսական շուկայում հայկական խմիչքները կայուն սեգմենտ և մրցունակություն են ունեցել: ԵՏՄ անդամակցության շրջանում անկում է արձանագրվել Հայաստանից Ռուսաստան արտահանվող կաթի, կաթնամթերքի և այլ կենդանական ծագման սննդամթերքի կազմում[2]՝ 2016թ. նվազելով 43%-ով և կազմելով 13.2 մլն դոլար: Արտահանման կառուցվածքում խոշոր ապրանքախումբ համարվող «Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերքները» ևս 2016թ. նվազել են՝ կազմելով 12.2 մլն դոլար 2015թ. 14.3 մլն-ի փոխարեն: Բացի ապրանքների և ծառայությունների առևտրից և կապիտալ ներդրումների իրականացումից, ԵՏՄ անդամ-երկրները, այդ թվում նաև Հայաստանը, համագործակցում են նաև մի շարք այլ ոլորտներում: ԵՏՄ անդամակցության հետ մեկտեղ փոփոխություններ են կատարվել աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում, ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տնտեսվարող սուբյեկտներին լիցենզիաների տրամադրման ոլորտում, ոստիկանության գործունեության, առողջապահության ոլորտում, տրանսպորտի բնագավառում և նույնիսկ մշակույթի նախարարության կարգավորման բնագավառում: ՀՀ-ի համար չափազանց կարևոր է խորացնել համագործակցությունը ԵՏՄ-ի հետ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում: Այնուամենայնիվ կարող ենք նշել այն փաստը, որ ՀՀ-ն, լինելով փոքրատարածք, Բելառուսի և Ղազախստանի նկատմամբ ունի համեմատական շատ լուրջ առավելություններ, որը նշանակում է, որ ՀՀ-ԵՏՄ շրջանակներում լուրջ հնարավորություններ ունի՝ օգտվելով ստեղծված բարենպաստ միջավայրից: ՀՀ-ն ակտիվորեն համագործակցում է ԵՏՄ անդամ-պետությունների հետ նաև կրթության և գիտության ոլորտում: Հատկապես խորանում է այս ոլորտում համագործակցությունը Ռուսաստանի հետ, որի վառ ապացույցն է ՀՀ-ում Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի մասնաճյուղի բացումը, իսկ արդեն վաղուց ՀՀ-ում գործում է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանը: Աշխատուժի ազատ տեղաշարժի ապահովման նպատակով ԵՏՄ պայմանագրով միության անդամ-պետությունների քաղաքացիների համար, ովքեր ցանկություն ունեն աշխատելու ԵԱՏՄ

[1] http://armstat.am/file/article/ft_2_nish_2016_10.pdf.

[2] Նույն տեղում:

պետություններից որևէ մեկում, թույլատրության փաստաթղթերի ձևակերպումը, ինչպիսիք են պատենտները կամ աշխատանքի թույլտվությունը, չի պահանջվում: Հավասարապես, ինչպես ԵՏՄ երկրների սահմանն անցնելիս՝ միգրացիոն քարտերի լրացումը, եթե քաղաքացիների գտնվելու ժամկետը չի գերազանցում մուտքի օրվանից 30 օրը: Աշխատողներն ու նրանց ընտանիքի անդամներն ազատվում են գրանցումից (հաշվառումից) ներքին գործերի մարմիններում մինչև 30 օր գտնվելու ժամկետով[1]:

Եվրասիական տնտեսական միության ուսումնասիրություն, ակնհայտորեն ցույց է տալիս դրա բազմաշերտ և բազմաբովանդակ լինելը: Եվրասիական տնտեսական միությունը որպես վերազգային մարմին՝ ստեղծվել է ժողովրդավարական հիմքեր ունեցող պետությունների կողմից, որոնք դրա ստեղծման հիմքում դրել են ընդհանուր համագործակցության գաղափարը:

ՀՀ-Ի ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ

ԴՈՆԱՐԱ ՀՈՎԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջին կարգի տնտեսագետ

Համառոտագիր: Հոդվածում ներկայացվում է ՀՀ-ի անդամակցությունը ԵՏՄ-ին, ինչպես նաև դրա սոցիալ-տնտեսական հետևանքները: Արդեն 2 տարի է՝ Հայաստանը Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) լիիրավ անդամ է: Հինգ երկրներ ընդգրկող ինտեգրացիոն միավորմանը միանալու գործընթացը Հայաստանը սկսեց 2013թ. աշնանը: Չունենալով ընդհանուր սահման ԵՏՄ մյուս երկրների՝ Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի հետ՝ 2016թ. Հայաստանն իր արտաքին առևտրաշրջանառությունը կազմակերպեց ԵՏՄ համաձայնագրերով:

Բանալի բառեր. *Եվրասիական տնտեսական միություն, առևտրաշրջանառություն, արտահանում, ներմուծում, մաքսատուրքեր, ինտեգրացիոն գործընթացներ, համագործակցություն, անդամ-երկրներ, միություն:*

[1] http://www.mfa.am/hy/international-organisations/EurAzES/.

ЧЛЕНСТВО АРМЕНИИ В ЕВРАЗИЙСКОМ ЭКОНОМИЧЕСКОМ СОЮЗЕ

ДОНАРА ОВИКОВНА ГРИГОРЯН
экономист первой категории Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация: В статье представлено членство Армении в Евразийском экономическом союзе, а также его социально-экономические последствия. Уже два года Армения является полноправным членом Евразийского экономического союза (ЕЭС). Процесс присоединения к интеграционной ассоциации с участием пяти стран начался в Армении осенью 2013 года. Не имея общей границы с другими странами ЕЭС - Россией, Беларусью, Казахстаном и Кыргызстаном, в 2016 году Армения организовала свой внешнеторговый оборот с соглашениями ЕЭС.

Ключевые слова: *Евразийский экономический союз, торговля, экспорт, импорт, таможенные пошлины, интеграционные процессы, сотрудничество, страны-участницы, о бъединение.*

ARMENIA'S ACCESSION TO THE EURASIAN ECONOMIC UNION

DONARA HOVIK GRIGORYAN
First Level Economist, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract: This article presents Armenia`s membership in the Eurasian Economic Union (EAEU), and socio-economic consequences of thereof. Armenia has joined the EAEU since January 2015 as a full member-state. In fall 2013, Armenia initiated the process of joining the Union of founding three member-states and along with Kyrgyz Republic's accession to the Union the number of full members reached 5 states in 2015. Without having common borders with the member-states of the EAEU, namely with Russia, Belarus, Kazakhstan and Kyrgyz Republic, Armenia's bilateral trade with each of the member-states was regulated in compliance with the principles stated in various EAEU agreements in 2016.

Keywords: *The Eurasian Economic Union, foreign trade, exports, imports, customs duties, integration processes, cooperation, member-states, union.*